մեկնեցաւ անտի պահել զայլ քաղաքս տէրութեան իւրոյ։ Իշխանք Լատինաց նախանձեալ ընդ յաղթութիւնս թագաւորին Անգղիոյ, երկպառակեցան 'ի միջի իւրեանց, և բազումք մեկնեցան 'ի հայրենիս իւրեանց։

Այրս այս էր արդարեւ առիւծասիրտ, բայց ունէր զրնութիւն ընձու, ասեն այլազգի պատմիչք. զի 'ի հրովարտակին՝ զոր եհան, յայտ առնէր զանկախ իշխանութիւն իւր եւ զանիրաւ սպանումն 2500 Իսլամ գերեաց. զի ըստ պայմանին՝ մինչ 'ի դարձ գերեացն քրիստոնէից 'ի Դամասկոսէ ունէին մնալ նոքա իբրեւ գրաւ 'ի ձեռս նորա. զի յաւուր յորում կոչեաց զնոսա 'ի բանակն արձակել յիւրաքանչիւր տեղիս իւրեանց, ետ կոտորել զնոսա. պատճառելով իբր թէ անցեալ իցէ պայմանեալ ժամանակն։ Իշխանք այլազգեաց ստիպէին զՍուլթանն սպանանել նաեւ զգերիս քրիստոնէից, բայց նա արգել զնոսա 'ի խորհրդոցն. իսկ այլք ասեն թէ ետ կոտորել զնոսա 'ի Կեսարիա։ Ապա կործանեաց զքաղաքն Ասկաղոն հանդերձ պարսպովք, եւ զբնակիչս նորա ցրուեաց 'ի գեօղս և 'ի քաղաքս։

Ի մարտին Նապլուսի մաղապուր զերծաւ 'ի բերդ ինչ, հրաման առնէր անտի դատարկել զքաղաքն Յոպպէ, եւ աւերել զբերդորայս չուրջ զնովաւ։ Ռիդարտոս պարապէր տիրել Յոպպէի և նորոգել զաւերեալ տեղիս. և յերկարիլ հակառակութեանց և խռովութեանց, խնդրեաց հաշտութիւն պայմանաւ. տալ ինքեան զԵրուսաղէմ եւ զԽաչափայտն Քրիստոսի. Սուլթանն ոչ առ յանձն. առաջի արար նա զայլ ինն եղանակ հաշտութեան, զի ինքն տացէ զքոյր իւր 'ի կնութիւն Մէլիք Ատիլայ, եւ նստել նորա իբրեւ իշխան Երուսաղէմի, զՊաղեստինայիս և զայլ ամենայն քաղաքս, զորս առին Լատինք 'ի սին պատերազմի, տալ իբրեւ օժիտ քուեր թագաւորին. Լատին իշխանաց մի եւս ամրանալ 'ի բերդս, այլ բնակիլ 'ի գեօղս. բազմութեան Լատին կրօնաւորաց չբնակիլ յԵրուսաղէմ. զայսոսիկ պայմանս թէպէտ եւ ընկալաւ Սուլթանն, սակայն քոյր թագաւորին ոչ առ յանձն ամուսնանալ ընդ առն այլազգւոյ, մանաւանդ կղերք ընդդէմ կացին, եւ հուսկ ուրեմն զիջան, եթէ թոյլ տացէ իշխանն պահել կնոջ զամրիծ հա-